



4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ)

1. Ընդհանուր տեղեկություններ

2015 թ. 4-րդ դասարանում սովորողների գիտելիքների ստուգումը անցկացվել է «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից (գրավոր), ուսումնական հաստատության տնօրենի սահմանած աշխատակարգով, ԿԳ նախարարության սահմանած միասնական օրերին՝ հունիսի 1-5-ը ժամանակահատվածում: Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում քննություն է անցկացվել նաև ռուսաց լեզվից: Քննություններն ընդունել են տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը: Գիտելիքների ստուգման թեստերը կազմել են ուսումնական հաստատությունների մեթոդմիավորումները՝ ըստ Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից հաստատված նմուշների:

4-րդ դասարանի հայոց լեզվի թեստը բաղկացած է եղել 2 մասից: Առաջին մասով ստուգվել են աշակերտի ընթերցանության (տեքստի ընկալման) կարողությունները և կապակցված խոսքի հմտությունները, 2-րդ մասով՝ նրա ուղղագրական, բառագիտական, քերականական գիտելիքները: Թեստը պարունակել է 14 առաջադրանք, որոնցից 7-ը՝ 1-ին մասում, 7-ը՝ 2-րդ: Առաջադրանքներից 4-ն ունեն ենթաառաջադրանքներ: Յուրաքանչյուր առաջադրանքի և ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվել է 1 միավորով:

1-ին մասի առաջադրանքներից 5-ը վերաբերել են տրված տեքստի բովանդակությանը: Հարցերից 2-ը եղել են ընտրովի պատասխանով՝ պատասխանի 4-ական տարբերակներով, 5-ը՝ ընդարձակ պատասխանով: Վերջիններիս աշակերտը պետք է պատասխաներ 1-ական նախադասությամբ: 1-ին մասի առավելագույն միավորը եղել է 9:

2-րդ մասը եղել են տեքստից անկախ 7 առաջադրանքներ, որոնցով ստուգվել են աշակերտի գիտելիքները ստորև տրված ոլորտներից.

1. Ուղղագրություն
2. Բառագիտություն
3. Ձևաբանություն
4. Շարահյուսություն

2-րդ մասի առավելագույն միավորը եղել է 11:

Մաթեմատիկայի թեստը բաղկացած է եղել 17 առաջադրանքներից, որոնք եղել են երեք տեսակի՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ (1-10-րդ), կարճ պատասխանով առաջադրանքներ (11-15-րդ) և ընդարձակ պատասխանով առաջադրանքներ (16-17-րդ): Վերջիններս եղել են խնդիրներ, որոնց լուծման ամբողջ ընթացքը աշակերտը պետք է ներկայացներ (17-րդ խնդիրը լուծելիս համառոտագրելը պարտադիր է եղել):

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվել է 1 միավոր, բացի 16-րդ առաջադրանքից, որի համար տրվել է առավելագույնը 2 միավոր, և 17-րդ առաջադրանքից՝ առավելագույնը 3 միավոր:

Թեստի կատարմանը հատկացվել է 90 րոպե:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվել է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի հավաքած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը համապատասխանեցվել է 10 միավորանոց համակարգին՝ համաձայն ստորև բերված աղյուսակի:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՆԴՂԱԿԸ			
Միավորը	Գնահատականը	Միավորը	Գնահատականը
1	1	11-13	6
2-3	2	14-15	7
4-5	3	16-17	8
6-7	4	18-19	9
8-10	5	20	10

2. 4-րդ դասարանում սովորողների գիտելիքների ստուգման արդյունքներն ըստ առարկաների

Աղյուսակում յուրաքանչյուր առարկայի համար ներկայացված են սովորողների գիտելիքների ստուգման արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ:

Վիճակագրական վերլուծությունը կատարվել է 4-րդ դասարանում սովորողների գիտելիքների ստուգման արդյունքների հիման վրա:

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը ¹	Ստանդարտ շեղումը ²
Հայոց լեզու	16113	7.54	1.8
Մաթեմատիկա	15855	7.35	1.9



10 միավորանոց համակարգում 7.35-7.54 միջին միավորը վկայում է բարձր արդյունքների մասին: Ստանդարտ շեղումը թույլատրելի սահմաններում է (որքան փոքր է ստանդարտ շեղումը, այնքան միավորները համախմբված են միջին միավորի շուրջ):

¹ Միջին միավորը բնորոշում է քննություն հանձնողների գիտելիքների միջին մակարդակը:

² Ստանդարտ շեղումը միջին միավորի հուսալիության չափման միջոց է:

3. 4-րդ դասարանում սովորողների գիտելիքների ստուգման միավորների բաշխումը

Սովորողների գիտելիքների ստուգման միավորների բաշխման հիստոգրամները³




³ Հիստոգրամը պոնների հաջորդականություն է, որոնցից յուրաքանչյուրը կառուցվում է համապատասխան միավորի (կամ միավորների խմբի) հիման վրա: Մյան բարձրությունը համապատասխանում է միավորի հաճախականությանը (տվյալ միավորը հավաքած աշակերտների թվին):

Յուրաքանչյուր հիստոգրամի ներքևի աջ անկյունում նշված են առարկայի միջին միավորը, ստանդարտ շեղումը և մասնակիցների թիվը:

Հիստոգրամներից երևում է, որ բաշխման կորը շեղված է դեպի բարձր միավորները, գերակշռում է 9 միավորը (32-35%):

4. 4-րդ դասարանում սովորողների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Հետևյալ դիագրամում ներկայացված են 2014-2015 ուստարում 4-րդ դասարանում սովորողների գիտելիքների ստուգման արդյունքները «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից: Արդյունքները բաժանվել են ըստ առաջադիմության խմբերի: Այդ խմբերը կազմվել են ցածր (1-4), միջին (5-8) և բարձր (9-10) միավորներ հավաքած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա:



Ինչպես երևում է դիագրամից միջին խումբը երկու առարկաների դեպքում էլ 50 %-ից ավել է, բարձր միավորներ հավաքած խմբերը կազմում են 40 %-ին մոտ, ցածր առաջադիմություն ցուցաբերած խումբը չի հասնում 10 %-ի:


5. Միջին միավորների վիճակագրական համեմատությունն ըստ մարզերի

Աղյուսակում ներկայացված են «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից գիտելիքների ստուգմանը մասնակցած 4-րդ դասարանի աշակերտների թիվը, տոկոսը և միջին միավորներն ըստ մարզերի

Մարզը	Հայոց լեզու			Մաթեմատիկա		
	Մասնակիցների		Միջին միավորը	Մասնակիցների		Միջին միավորը
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը	
Արագածոտն	1156	7.2	6.9	1128	7.1	6.7
Արարատ	1549	9.6	7.4	1505	9.4	7.1
Արմավիր	1748	10.8	7.5	1721	10.8	7.3
Գեղարքունիք	1303	8.1	7.8	1297	8.1	7.5
Երևան	3152	19.6	7.7	3239	20.3	7.6
Լոռի	1815	11.3	7.4	1733	10.9	7.2
Կոտայք	2278	14.1	7.7	2223	13.9	7.5
Շիրակ	1227	7.6	7.6	1229	7.7	7.5
Սյունիք	729	4.5	7.6	730	4.6	7.5
Վայոց Ձոր	342	2.1	7.0	337	2.1	6.8
Տավուշ	814	5.1	7.7	813	5.1	7.5

Աղյուսակում յուրաքանչյուր առարկայի միջին միավորներում մգեցված են այն միավորները, որոնք բարձր են այդ առարկայի միջին միավորից:

Ստորև բերված դիագրամում ներկայացված են միջին միավորներն ըստ մարզերի:



Դիագրամից և աղյուսակից երևում է, որ բոլոր մարզերում երկու առարկաների միջին միավորները մոտ են իրար, այսինքն, եթե տվյալ մարզում միջին միավորը ցածր է հայոց լեզվից, ապա մաթեմատիկայից նույնպես ցածր է, և հակառակը:

Հայոց լեզվից լավագույն արդյունքը գրանցվել է Գեղարքունիքի մարզում, մաթեմատիկայից՝ Երևանում:

Երկու առարկաներից համեմատաբար ցածր արդյունքներ են ունեցել Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում: